ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

<< -------->> << ---------- >> 2024թ. **N ----------**

<<ԺՈՂՈՎՈՒՐԴ>> ՕՐԱԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԻՆ

/էլ. հասցե՝ info.armlur@gmail.cor/

Ի պատասխան Ձեր՝ 23.02.2024թ. հարցման

Հարգելի՛ տիկին Աղասյան,

Հայտնում եմ, որ ՀՀ Արմավիրի մարզում բնակվում է ԼՂ-ից բռնի տեղահանված 10222 անձ: Նշված անձինք և նրանց ընտանիքները ստացել են համապատասխան աջակցություն: Մասնավորապես՝ ՀՀ պետական բյուջեով հատկացված գումարների հաշվին համայնքների կողմից այդ ընտանիքներին մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը բաշխվել է սնունդ: Դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին՝ ըստ երեխաների քանակի տրամադրվել է միանվագ դրամական աջակցություն: Տարբեր միջազգային բարեգործական կազմակերպությունների կողմից տրամադրված մարդասիրական օգնությունները (սնունդ, հագուստ, անկողնային պարագաներ, մանկական սնունդ, հիգիենայի պարագաներ, մահճակալներ, կենցաղային տեխնիկա և այլն) համայնքների միջոցով բաշխվել է վերոնշյալ ընտանիքներին:

ՀՀ Արմավիրի մարզում ս/թ փետրվար ամսվա դրությամբ պետական և համայնքային տարածքներում բնակվում է 38 անձ, հյուրատներում՝ 59 անձ: Նշված վայրերում մինչ օրս բնակվելու փաստը հիմնականում պայմանավորված է տվյալ համայնքում վարձակալության տրվող բնակարանների սղությամբ և դրանց բարձր վարձավճարներով:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց զբաղվածության վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում տեղեկատվություն առկա չէ, քանի որ զբաղվածության ոլորտը կարգավորվում է իրավասու պետական մարմնի, այն է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

2024-02-28 12:18:51 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ**

Կատարող՝ Առողջապահության և սոցիալական ոլորտի
հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝
Ցողիկ Սարգսյան
Հեռ.՝ 094837637